

նորէն ու միայն աւագ, բայց այս անգամ ճերմակ աւագ, զոր կը կոչէ ինք «ծով աւագ» (205—207):

26 օրերու իր ճամբորդութեան միջոցին, կ'ըսէ թէ ամբողջ ճամբուն վրայ միայն երկու տեղ ջուր կար, ան ալ ուղտերը կրնային խմել, բայց մարդիկ՝ ոչ (203—204): Ճամբայ ալ չկար հոն, այնպէս որ սատկած ուղտերու մարմինները իբր ճամբու նշան կը ծառայէին (207—208):

Եգիպտոսի համար ուրիշ աշխարհագրական տեղեկութիւններ չի տար դժբախտաբար, բացի շատ անցողակի յիշատակութենէ մը Նեղոսի մասին, որ շէն կը պահէ Եգիպտոսը:

Փալով Հապէշիստանի բնական աշխարհագրութեան, երեւան կու գայ թէ սահմանագլուխէն մինչև մայրաքաղաք, երկիրին կեդրոնը, 30 օրուան ճամբան երկու մասի կը բաժնուի: Առաջին կէսը, այսինքն 15 օրուան ճամբան, լեռնային է անընդհատ ելեւէջներով, իսկ մնացեալ 15 օրուան ճամբուն սկիզբը կայ լեռ մը, բարձր և երկայն, որուն միւս կողմը դրաստներ չեն կրնար անցնիլ, այնքան սեպ է, ուստի բեռ և անասուն չուանով վեր կը քաշուին (37—46): Այս լեռը անցնելէ յետոյ՝ երկիրը դաշտային է և այնքան շէն ու ծաղկեալ, որ միակ քաղաքի մը տըպաւորութիւնը կը թողու (47—48): Իր նկարագրութեան համաձայն՝ երկիրը ջրառատ է (130):

Նեղոսի աղբերակունքը, ինչպէս նաև Զանա լիճին նկարագիրը՝ երկիրին ջրագրութեան մասին քիչ թէ շատ գաղափար մը կու տան (110—112):

ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹԻՒՆ. — Շնորհիւ հասարակածային կլիմային և ջրառատ հողին, Հապէշիստան հողային արգիւնաբերութեան տեսակէտով հարուստ երկիր մըն է: Թովաննէս Թիւթիւնճի կը հաստատէ